ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-92-46,
էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 03/15/3008-2023

«10» 08 2023թ.

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

էլ. փոստի հասցե՝ ekhachatryan@peacedialogue.am

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

2023 թվականի հունիսի 15-ին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին ուղարկված «Նախկին ռազմագերիների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ զեկույցն[1] ուսումնասիրվել է Պաշտպանի աշխատակազմում:

Ընդհանուր առմամբ, Զեկույցի վերաբերյալ մեր կարծիքը դրական է: Գտնում ենք, որ Զեկույցում տեղ գտած գաղափարները, այդ թվում՝ նախկին ռազմագերիների իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային փորձի և ներպետական կարգավորումների համադրությամբ ներկայացված առաջարկները կարող են դառնալ արդյունավետ միջոց ոլորտում առկա խնդիրները քննարկելու և դրանց թիրախային լուծումներ գտնելու հարցում:

Այս համատեքստում կարևոր է նշել նաև, որ Մարդու իրավունքները պաշտպանը ևս ստանում է բազմաթիվ բողոքներ, որոնք վերաբերում են գերությունից վերադարձածների ու

[1] Այսուհետ՝ Զեկույց:

նրանց ընտանիքների իրավունքների պատշաճ իրացման հետ կապված հարցերին, օրինակ, գերությունից վերադարձած քաղաքացիների բժշկական հետազոտությանն ու փորձաքննությանը, կրկին զինվորական ծառայության ներգրավմանը, մարտական հերթապահության մեջ չընդգրկելուն, սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելուն և այլն: Կարևոր է, որ այս հարցերին անդրադարձ է կատարվել նաև Զեկույցում և ներկայացվել են խնդիրների լուծման եղանակներ:

Նկատի ունենալով, որ ինչպես գերության մեջ գտնվող, այնպես էլ գերությունից վերադարձած քաղաքացիների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը մշտապես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո՝ Պաշտպանը պատրաստակամ է համագործակցել ոլորտային խնդիրները վեր հանելու և դրանց համակարգային լուծումներ գտնելու հարցերում:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

8/10/2023

X

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN VLADIMIR 3611860174

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Զինծառայողների և նրանց ընտանիքների
անդամների իրավունքների պաշտպանության բաժին
Կատ.՝ Անդրանիկ Եղոյան
Հեռ.՝ 010-53-92-71